



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 02 » 07. 20 14թ.

N 158-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ  
ԵՎ ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ՄՈՐԵԽՆԵՐԻ ԴԵՄ ՔԻՄԻԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ  
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԲՈՒՅՍԵՐԻ  
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 2014 թվականի հունիսի 20-ի N 048 և հունիսի 30-ի N 054 գրություններով ներկայացված Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի տարածքում կատարված մոնիտորինգի արդյունքները՝ մորեխների դեմ պայքարի միջոցառումներ իրականացնելու նպատակով

Հրամայում եմ՝

1. Հաստատել 2014 թվականին մորեխների դեմ քիմիական պայքար իրականացնելու նպատակով՝ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Պարոյր Սևակ և Նարեկ համայնքներին անհատույց հատկացվող բույսերի պաշտպանության միջոցների չափաքանակները՝ համաձայն հավելվածի:

2. «Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա. Ավագյանին՝

1) ապահովել բույսերի պաշտպանության միջոցի անհատույց հանձնումը Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Պարոյր Սևակ և Նարեկ համայնքների ղեկավարների կամ վերջինիս կողմից լիազորված անձանց՝ սույն հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածի համաձայն.

2) յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո մինչև հաջորդող ամսվա 10-ը աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչություն ներկայացնել հաշվետվություն օգտագործված բույսերի պաշտպանության միջոցի քանակության վերաբերյալ:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել նախարարի տեղակալ Ս. Գալստյանին:

ՆԱԽԱՐԱՐ՝  ՍԵՐԳՈ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված

ՀՀ գյուղատնտեսության նախարարի  
2014թ.հուլիսի 2- ի 158-Ա հրամանի

**2014 ԹՎԱԿԱՆԻՆ ՄՈՐԵՆՆԵՐԻ ԴԵՄ ՔԻՄԻԱԿԱՆ ՊԱՅՔԱՐ  
ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ  
ՄԱՐԶԻ ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ ԵՎ ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ  
ՀԱՏԿԱՑՎՈՂ ԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ  
ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԸ**

Համայնքը	Բույսերի պաշտպանության միջոցի քանակը, լիտր	Աշխատանքի ծավալը, հեկտար
Պարույր Սևակ	64.5	430
Նարեկ	54.75	365
<b>Ընդամենը</b>	<b>119.25</b>	<b>795</b>